



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագրի՛ն՝ 10 ժր. տարեկան

Հասցի՛

Réd. du jour. „VERADZNOUTIOUN“ Roustchouk

Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“ — Руща

ՄԻ «ԿՈՉ»

Մեր խօսքն այն «կոչի» մասին է, որ վերջերս յայտարարեց Ռուսչուկի Հնչակեան Մասնաճիւղը: «կոչի» ուղղած է Հնչակեան ընկերներին, բայց և մի նոյն գործութեամբ նա իսկապէս ուղղած պէտք է համարել մի կողմից հայ յեղափոխական տարրերին առհասարակ և միւս կողմից՝ մասնաւորապէս և աւելի մեծ նըշանակութեամբ հայ բանւոր դասակարգին: Այդ «կոչը» մի նըշակելի երկոյթ է կազմում: Նա ծրագրային ընտելան ունի և ընդհանուր կերպով ամփոփում և արտայայտում է այն ուղղութիւնը, որ այժմ յայտնի է մեր գործունէութեան անուան տակ:

Մենք միտք չունենք այստեղ վեր հանել այն բոլոր գրութիւնները, որ «կոչը» ներկայացնում է իբրև ուղի նոր գործունէութեան: Բայց հարկ համարելով նախ վերլուծել նրա մէկ-երկու նախնական գրութիւնները, մենք ապա կանչենք նրա այն գրութեան, որ մեր կարծիքով կազմում է նրա ամենահիմնական մասը:

«կոչի» համաձայն հայութեան առաջ այսօր կայ երկու դատ, որոնք ընթանում են զուգընթացաբար և որոնք պահանջում են «միասնեղի և միաժամանակեան յեղափոխական գործունէութիւն»:

Այդ երկու դատն են՝ թիւրքահայ ու ռուսահայ, և յեղափոխական գործունէութիւնն էլ «միատեղի և միաժամանակեան» կերպով թէ՛ թիւրքաց-Հայաստանում և թէ՛ կովկասում: Եթէ «միաժամանակեան» խօսքն արտայայտում է այն միտքը, թէ ներկայ հասարակական գրութեան մէջ պէտք է յեղափոխական պայքար մղել թէ՛ սուլթանի դէմ և թէ՛ ցարի դէմ, միւս՝ «միատեղի» խօսքը, մեր կարծիքով, ունի աւելի առաձգական իմաստ: Արդարև, յայտարարելով, որ թէ՛ թիւրքաց-Հայաստանում և թէ՛ կովկասում հայկական յեղափոխութեան անմիջական նպատակը պէտք է լինի՝ «տապալել երկու բռնակալութեանց լուծը և ձեռք

բերել ընդարձակ քաղաքական սպասութիւններ ուսկալարական սահմանադրութեամբ», «կոչը» դրա հետ միասին յայտարարում է հետեւեալը. — «Միասնեղի և միաժամանակեան յեղափոխական գործունէութիւն երկու երկիրներում մէջ ալ, իւրաքանչիւրին մէջ տեղական, քաղաքական ու հասարակական առանձնաշտկութիւններու հաւանաբան հոյի վրայ»: Այս վերջին յայտարարութիւնն արդէն ըստ ինքեան որոշում է, որ «միատեղի» խօսքը չը պիտի հասկանալ Տեֆլիսիական մտքով, այլ բարոյական նշանակութեամբ և գործնական աշակցութեամբ: Եթէ այդ երկու երկիրներէ իւրաքանչիւրն ունի իր առանձնաշտկոյ «տեղական, քաղաքական ու հասարակական» պայմաններն ու հողը, պարզ հետեւութիւն է առաջանում, որ դրանցից իւրաքանչիւրի գործունէութիւնն էլ կամայ-ակամայ, այլ և անհրաժեշտաբար, պէտք է կրէ առանձնաշտկու գործնական ձևեր, թէ՛ կուզ և կապած լինեն իրարու հետ մէկ ընդհանուր պայմանով, այն է՝ անմիջական նպատակով: Այստեղ, հարցի այդ կերպարանքի տակ, առաջ են գալիս նաև կազմակերպական խնդիրներ, որոնք ենթադրելով հանգեւած յեղափոխական գործի մեկ եւ յեղափոխական յեղափոխական ինքնակազմակերպութեան Տեղական ինքնավար գրութիւն: Բայց ներկայ յոգեւածով մենք միտք չունենք մտնել այդ խնդիրների քննութեան մէջ, և շարունակում ենք մնալ այն շրջանակում, որ մեզ սահմանում է «կոչը» և անցնում ենք նրա ամենահիմնական գրութեան, այն է՝ սոցիալիստական գործունէութեան, որ նա գնում է իբրև յեղափոխական գործի «յասակագիծ»:

Թող ընթերցողը մեզ թոյլ տայ ամբողջովին առաջ բերել «կոչի» այդ ամենակարևոր կէտը. — «Սոցիալիստական գործունէ-

ութիւն, ունենալով սոցիալիզմի յաղթութիւնը իբրև նպատակ») և հիմնուած ըլլալով բանւոր դասակարգի պատկան ձգտութեան վրայ, որոնց իրագործումը պահանջ է ամբողջ քաղաքակրթութեան, ինչպէս նաև իւրաքանչիւր ազգութեան քաղաքական ու սոցիալ-տնտեսական ընդհանուր ու կատարելալազատագրութեան ու բարորութեան. սոցիալիստական գործունէութիւն՝ զարգացնելով բանւոր ընդհանրութեան դասակարգային ինքնակազմակերպութիւնը և կարգաւորելով նրա մարմինը Սոցիալիստական կուսակցութիւն, որ կը մղէ քաղաքական կռիւն — ահա մեր գործի յասակագիծը համաձայն իրականութեան առաջ եկած պատմական ու հասարակական պահանջներու»:

Այդ յայտարարութեամբ «կոչը» վճռականապէս և ամբողջապէս անցնում է յեղափոխական սոցիալիզմի հողի վրայ, և ռուսահայ իրականութիւնը դրա համար յայտնում է նրա հիմքը: Եւ այստեղ մեզ միայն մնում է բազմալ, որ Հնչակեան տարրերը, որոնք հակած են դէպի սոցիալիզմ և կամ ուղղակի կանգնած են բանւոր դասակարգային հողի շահերի վրայ, ընդ փոյթ ընդգրկեն այդ նոր, սոցիալիստական գործունէութիւնը:

Չուզենալով և Հնչակեան աւանդութիւնների շնորհով ուղղակի անկարող լինելով, «կոչը» խորշում է ամեն մահացուցիչ դոքտրինիստիկական սահմանափակումներից, միանգամայն որոշելով հայ սոցիալիստների դիրքը թէ՛ դէպի գեղջիկական ընդհանրութիւնը և թէ՛ դէպի ընդհանուր հայ հասարակութեան անկեղծ խաւերի հալածական գրութիւնը: Այսպէս, առաջին կէտի մասին, նայելով միշտ սոցիալիստական սակեղծից, նա յայտարարում է. —

«Սոցիալիստական պրոպագանդա ժողովրդի միւս աշխատատեղ խաւերում մէջ գլխաւորապէս գեղջիկական, որով կապիւն»

*) Այդ և յետագայ նոսր գրերը մերն են:

աշխատանքով եւ ո՛չ շահագործութեամբ և որոնք թէ՛ իրենց տնտեսական որոշ եւ յոյսը յայտնաբերելու առաջնորդ պատճառով, ինչպէս և իրենց քաղաքական պահանջներու պատճառով, կոչում են դաշնակցերու ու գործակցերու պրոլետարիատի հետ՝ պաշտպանելու համար իրենց շահերը — ահա՛ հայ սոցիալիստներու դերը յեղափոխական աշխատանքի ժողովրդի վերաբերութեամբ»:

Իսկ վերոյիշած երկրորդ կէտի, այն է՝ ընդհանուր հայութեան ամեն խաւերի հալածական գրութեան մասին, «կոչի» արձակում է յեղափոխական դիմագրութեան և ինքնապաշտպանութեան աղաղակը, իբրև սուրբ իրաւունք ամեն ճշմարտ ժողովրդի նա առում է. —

«Յեղափոխական ընդհանուր դիմագրութիւն և ինքնապաշտպանութիւն հայ ժողովրդի կողմէն թէ՛ ցարի դէմ և թէ՛ սուլթանի դէմ յարձակումներուն, բռնութիւններուն ու վայրագութիւններուն դէմ — ահա այն յեղափոխական ճիշտ ու կոչը, որ միակերպ նշանակութեամբ ու զօրութեամբ պէտք է տարածուի հայ հասարակութեան անկեղծ խաւերում վրայ, յեղափոխական ինքնակազմակերպութեան վրայ»:

Ապա մասնաւորապէս ռուսահայերի վրայ դնելով մի գեր ու մի պարտականութիւն, այն է՝ «միատեղի գործակցութիւն Ռուսաստանի բոլոր միւս ազգերու սոցիալիստական կուսակցութիւններու հետ յեղափոխական սոցիալիզմի հողի վրայ», «կոչը» բացականչում է. — «Կեցցե՛ք յեղափոխական սոցիալիզմ. քոյ կորսի՛ն ստորակարգի ու ցարի դէմ կեցցե՛ք՝ ուսկա յարակուս անանկախութիւն»:

Եւ այդ վտանգ ու խոթորակաւ աղաղակն ամբողջական ամփոփումն ու արտայայտութիւնն է մէկ ամբողջ Քրայբիւ մի նոր գործունէութեան, մի մեծ գործի, որ հանդիսանում է «սոցիալիստական ընդհանուր մարդկութեան ամեն տեսակ ճշմարտութեան, որով և կը ներկայանայ իբրև միակ հիմնական, ճշմարտ և ազատարար լուծումն ազգային խնդրի»:

սել, վերջերքս շատ շատացել է։ Օր ցերեկով յարձակվում են երկաթուղու գնացքները, ուստաց գանձարանները, փոշտերը և մինչև իսկ պահապան զինուորների վերայ և նոցա սպանելով, զէնքեր վեր առնում գնում են) առաջարկում էր կովկասում տիրող քաղաքացիական օրէնքները միանգամից փոխել և ինքիվատուալից (անհատական) օրէնքները փոխարէն — կոլեկտիվները (ընդհանուր) օրէնքներ սահմանել։

«Մենք — ասում է նոյն թերթը — սոյնպիսի լայն օրէնքներով ենք կառավարում կովկասը — այդ վայրերի բնազդներով սնուած և մեծացած բազմաթիւ մեզ թշնամի ցեղերին՝ որ միանգամայն անհամապատասխան են անգղական վայրերի և կառավարութեան ձեռքից իւրաքանչեւ պաշտպանող ընդհանրին, որի հետեանքը այն է լինում, որ անվերջ կերպով յանդուգն մարգասպանութիւնները, առաջակութիւնները և քաղաքական գործերով պարսպողները հետքը կորչում է։ Օրինակներ էք ուզում, գոհութիւն Աստուծոյ, օրինակներ շատ կան։ Հէնց այս օրուայ հեռագրներում ընթերցողը տեսնում է, որ հայերը կարում օր ցերեկով, ժամի 12-ին, հէնց սատիկանատան առաջ սպանում են թուրք լաչի-թէկին, իսկ մարգասպանին, հայերը իրար մէջ անյետ կորցնում են, և երբ ուստի անը մարգասպանին տես-

նելով բռնել է ուզում, այն ժամանակ հայ առաջակը գնդակի մի ուրիշ հարուածով ուստի կանխել է վեր գցում ու անյետանում։ Եւ երբ սատիկանութիւնը ստիպում է այդ նոյն հանգիստեան հայերից առաջակի առնուն ու տեղը իմանալ, նոքա այն սատիկան լրբանում են, որ պատասխանում են ոչ տեսել ենք և ոչ էլ գիտենք թէ ո՞վ է սպանել ՚սic! Մի ուրիշ օրինակ. Ալեքսանտրապուրում ուղղափառ վասիլեզ քահանայի տերութիւններին (որոնց սվ լինելը անյետ լիաքնուեց), այժմ հաւատացնում են որ հայերը 25,000 ռ. փող են նուրբել։ Սա ի՞նչ խայտառակութիւն է։ Ինչո՞ւ չպէտք էր զիջուք այդպիսի գէպքերում ամբողջ հասարակութիւնը, ամբողջ շրջանները խիստ պատասխանատու թեան ենթարկուէին (որպէս թէ սատիկանութիւնը քնած է), ինչո՞ւ չպէտք էր այս ճանապարհով հայ զաւարտական կազմակերպութիւնների արմատը գտնել, պատժել, արտոբել, տուգանքների ենթարկել։ Ինչո՞ւ չպէտք է վերջապէս զինուորական դատարաններ հիմնել կովկասում և զինուորական դատարաններով դատել այդպիսիներին։

Մենք սովորել ենք կովկասի նման կիսավայրերի երկիրները Ֆրանսիական կամ Գերմանական լայն օրէնքներով կառավարել, լայն հապա մի հետաքրքրուեցէք ծանօթանալ թէ Ֆրանսիա-

ցիք իրենց Աֆրիկական Ալժիր կառավար ի՞նչ խիստ օրէնքներով և պատիժներով են կառավարում, օրէնքներ, որոնց մասին երազել անգամ անկարող ենք։

Մոսկուա. Արար.

(Շարունակելի)

ԿԱՐՄ, Դեկ. 1903 թ.

Նիկոլա Յարը 1902 թ. Ապրիլի 1-ին Կոնստանտնուպոլիսում, նահանգապետի ասանը, որ հաւաքած են եղել Կոնստանտնուպոլիսի Պոլիտիկա, Պարտիա, Չեքոսլովակիա, Օրթոդոքս և Վարդանանի նահանգների բոլոր գիւղապետները (старшины), խօսել է նրանց մի փոքրիկ խրատական ձևով, որից քաղում ենք մի քանի տող. «Помните, что богатъютъ не захватами чужого добра, а отъ честнаго труда, бережливости и жизни по заповѣдямъ Божиимъ». (Յիշեցէ՛ք, որ հարստանում են ո՛չ թէ ուրիշի ունեցածը յափշտակելով, այլ մաքուր աշխատութեամբ ու խնայողութեամբ և կենսաբան Աստուծոյ պատուիրանները կատարելով)։

Այն ժամանակ, երբ վերջինից անհանգստեանում առաւ մուսուլմանները հարստանալով անգութ պետութիւնից՝ անասելի, անպատմելի հարկերի սակ ճնշում էին վերջին ծայր յուսանալու ու զայրացած, իսկ նրանց կողքին հարկաւոր հարուստ ուստի պոմպոզիկներ (ազնուական կառուածատէրեր) իրենց հանկուտ սուրբերն էին հաւաքում իրեզ ու կրակ գրեզայիներով տանջելով, չոր հացի կարօտ թողնելով նրանց, ստանալով մանուսնոյ որ թէ՛ նահնգ, եւ թէ՛ բարձ. իշխանութիւնները մազաչափ անգամ ուշադրութիւն չեն դարձնում նրանց արդար տրտուհներին, — այն ժամանակ, ասում ենք, նա՛ այդ ուստի

հասարակ ժողովուրդը՝ օտար կանգնեց, ապստամբուեց պետութեան ու անխիղճ ազնուական-կառածատէրերի դէմ՝ քար ու քանդ անելով ամբարները և «կերակուր» ստանալով իր սովորուած քիւրթիւնը...

Այն ժամանակ հարկաւոր էր Ռուսաց հզօր, բայց վերին սատիկանի անգութ կայսրին յորդորել չըլլալից՝ սակեղու ուրիշի ունեցածը, որովհետեւ «անարդարութիւն, անխղճութիւն է ձեռքը գնել ուրիշի ունեցածի վերայ», որովհետեւ ինքը նրանց կատէր «իր խնամակալութեան» սակ... Բայց շատու թողեց այդ լայնածաւալ պետութեան բազմամարդ գիւղական ժողովուրդը գիշատիչ կառավարէնների և անհոգի ազնուականներին ճիւղաներում ու ինքը վերադառնալով Ս. Պետէրբուրգ՝ անձնատուր կղաւ իր սովորական կեր ու խուսիք, հարեցողութեան ու թղթախորհի... «Յիշանի՛ք է իմ աղբը, որովհետեւ իմ պարտականները, մինիստրները գանգատներ չեն հասցնում իմ ականջներին, այլ իրենք սանձաւած օրէնքները հիման վրայ բարեխղճաբար կառավարում են իմ հզօր պետութիւնը և պաշտպանում թէ՛ ներքին և թէ՛ արտաքին թշնամիներին... Եւ նա, մեծն Նիկոլա Ա. ի Նիկոլա Ռ. կողմը, թղթելը, առատ առատ փրձատրում է իր ստորագրեալ անօրէն մինիստրներին ու բոլոր պաշտօնատարներին, որոնք հարստանալով ազգաբնակչութիւնը, անպատմելի կաշտքներ վերցնելով, դեռ յանգստում էլ են յաջս բարձր, իշխանութեան կազմակերպում վնասակար ներկայացնել Ռուսաց տիրապետութեան սակ հեծող և իրենց դարաւոր հայրենիքում ապրող այս կամ այն աղբը, ցեղը, ժողովուրդը։

Սակայն, արե՛ տե՛ս, ընթերցող, որ ուղիղ մի սարբ սրանից առաջ, Նիկոլան խօսելով խղճից ու արդարու-

ԱԵՏԻՍ ՆԱԶԱՐԷԿ 13

ԶԱՐԱԽՍԻ ԹՁՈՒԿԸ (Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ Cie ՀԱՍՏԻՆ)

Շարունակելիք առաջ բերել իրողութիւնները։

Սո՛ւս է Առաքելեանի ասածը, թէ մենք իբր երեսի վրայ ձգելիք և ասանց՝ միջոցի թղթիք մեր երկուզաակներին՝ իրանց մօր հետ։

Առաքելեանը, մի բողոքովին անյայտ և օտար անձ մեր ընտանիքին, — մէկ այլ ստորաքարտութիւն է գործում այդպիսի մի զրպարտութիւն ստարածելով։ Եւ իբց մեզմացողից պարտադիր փոփոխել այդ ազգայնական մար, ենթադրե՛նք արգիւք, գէթ մի քովէ, որ նա ինքը չէ հնարած այդ սուտը, այլ այն լսել է մէկ այնպիսի անձից, որի թաքուն շահն է եղել այդպիսի լուրեր ստարածել մեր գէ՛մ։ Եթէ այդ ենթադրութիւնը հասանական էլ լինի, դարձեալ Առաքելեանի խաղաղ մտանում է իր սեղին ու չափը և ի շարն է գործ գնում հասարակութեան գիւրահասարակութիւնը, երբ յանգստում է այդպիսի մի դայթակցական կէտի նկատմամբ ուրիշից լսած զրպարտութիւնը հրապարակել վրայ ներկայացնել իբրեւ ճշմարտութիւն...

Ահա՛ իրողութիւնը։

Չատուելով մեր ամուսնուց, յայտնի է, որ մենք նրան մեր երկուզաակներին հետ բնաւ չենք թողած առանց միջոցի, որ ժամանակաորակէս (ի հարկէ, ո՛չ մշտնջենապէս, մենք հարուստ չենք) սպանուած էր

նրանց ապրտուտը և զաւակները կըրթութիւնը, որ այնուհետեւ միշտ ամենայն պատարաստականութիւն ենք ցոյց տալի, հարկ եղած պարագային, փայլ ներթափան նրանց օգնութեան, որ միշտ ձգտող ու նախանձախնդիր ենք և լել ունենալ կանոնաւոր ու շարունակական կապեր մեր զաւակներին հետ, ունենալ մեր մշտական խնամքը նրանց վրայ, գէպի որոնց մեր կրած հայրական խորի սէրը կարող են վատարար վերադարձ միջոցայն Առաքելեանի նման վայրահալ սինթորները։

Իբ ստանալով ճգնելով մեր գէ՛մ գրգռել հասարակութեանը Առաքելեանին իրան ձեռացնում է զայրացած և միաժամանակ շոյում հասարակութեան յոռի բնազդներն ու նախապաշարութիւնը։ Ո՛րքսն ծիծաղելի ու ստափակ են նրա մեղաբանական ճիշդը և ջէզուրի ձեռնարկը զայրոյթի պոտոցները։ Անճարակ ու կոտորած մի գրիչ ձեռքին՝ ո՛րպիսի լիտի լեզու է գործածում այդ մարդը, որի համար ընտրութիւնն ամեն տեսակից եղել է իւր թէ մայր, Հարկ էլ չը կայ, բնակ միտարար, ասելու, որ նազարէկի զաւակներն ամենուին պէտք չունեն ո՛չ ոքի կոկորդիլոսան արցունքներ և նա՛ մանուսնոյ Առաքելեանի պէս մէկի կողմից, որը նրանց հօր վերաբերութեամբ յայտնուում է մի չարափօս թղթիկ։

Մեկի չեմք ձգել մեր զաւակներին, ո՛չ, այլ զատել եմք նրանց մօրից... Եւ Առաքելեանը, փողոցում իր հաւաքած քարերը մեր վրայ չարակալով, պատում է. — Ի՛նչպէ՛ս, հասարակական «խայտատակութիւն» չէ՞, որ ամուսինը գտաւում է իր կնոջից, 10—12 տարեկալը միասին և յանկարծ գատակը,

«չէ՞ որ կատարել ոճրագործութիւն է և աշխարհիս ո՛չ մի բարոյական օրէնքներով, նոյն իսկ վայրենիների հասկացողութեամբ անթոյլատրելի է» (բառեր Առաքելեանի)...

Արդ՛ րեւ, պէտք է խոստովանենք, որ մեր կրէտի նահանգացողութիւնն էլ ամեն խնդրի մէջ հետեւ չէ գնացել «վայրենիների հասկացողութիւնից», և նրա նման խաւարմիտ, յետադէմ մէկ անհատից մենք այլ բան չենք կարող պահանջել։ Սակայն նա շատ է իր «խելքին զօր տալիս», շատ «խալթ կրէն», ինչպէս ասում են մեր թիւրքահայ եղբայրները, երբ իր խորին ստիպութիւնն ուզում է կերցնել հասարակութեան իբրեւ գիտութիւն, երբ հնարաւոր պատաւ կնկայ նման պոտում է, թէ «աշխարհիս ո՛չ մի բարոյական օրէնքներով անթոյլատրելի է»։ որ ամուսինները գտաւեն Այս քաղաքակիրթ դարում այդ մարդը գեւ լիւր խալթախորում է իր արեւելեան ներսած նախապաշարութիւնը իրար թիւրթիւթութեամբ։ Տիրացու՛ նա զանց է առել այն հանգամանքը, որ «աշխարհիս բարոյական օրէնքները» ստեղծել են ո՛չ թէ ասիական ճանճային մթնոլորտում, այլ քաղաքակիրթ ազգերի կեանքում, ո՛չ թէ անմարտական խելքի խաւարում, այլ մարդկային հանճարների լոյսի տակ։ Ողորմելի միտք՝ նա մտացել է, որ աշխարհում գոյութիւն ունի ապակառուած։ Տգէտ՛ նա չը գիտէ, որ ապակառուածը հիմնովին լաւրոյական երեսն թէ՛ վերածւած ընդհանուր օրէնքի և որ ստեղծւելով կեանքի պահանջներին՝ այդ մեծ ու բարձր օրէնքը գոյութիւն ունի քաղաքակիրթ ազգերի մէջ և միայն մեզ պէս

ստիական ազգերն են, որ զուրկ են նրանից։ Կաւարմիտ՛ նա չէ հատկացել, որ ապահարգանի սկզբունքն անկարարոյական նպաստի է ծառայում, — եւս առելի — անարարոյականութեան դիւրեւաբար։ այդ օրէնքը միջոց է սաւլիս գառակու միջնացից այն առուսիններին, որոնց համար, միասնելի կենակցութեան շարունակումն այլ և այլ հանգանակներէլ պատճառով՝ յայտնում է դժարասանելի կամ անկաւելի, և սպա սալ նրանց իրանց անկասական ազատութիւնը, որը շիւղիկ խալթում է, երբ անուսինների մեջ ճիւղում է անհայտնութիւն։ Աւելին ևս։ Քաղաքակիրթ ազգերի մէջ ամենապատմաբար օրէնքներն են ու հասարակական գործիչները ձգտում են առելի և առելի ընդլայնել այդ օրէնքը, առելի և առելի գիւրացնել անհայտ ամուսինների մէջ գառակու, այսինքն անպահարգան ունենալու միջոցները, և այդպիսով ձգտում են հասնել իրականութեան մէջ կենակցութեան սկզբունքի բարոյական կատարելալ բարձրութեան, որ պեռ ամբողջ նարիւր սուի առաջ հանճարեղ անդլիցի բանաստեղծ ու մասճող Շէլլի ձեռակերպում է այդպէս. — «Անուսինները պիտէ իբր անկապած լինեն այնքան ժամանակ, որքան ժամանակ նրանք իրար սիրում են փոխադարձաբար։ Անկե՛ն թէլ օրէնք, որ նրանց նարկարարում է ապրել միասնելի գիւր մի րօպի առելի՛ այլ զգայուն մարդուց յետոյ, յայտնում է անսանելի բռնութիւն, անկասական ազատութեան դիւ մի ուսին... Այդ րօպից յետ անուսինների կենակցութեան շարունակումն անարարոյականութեան է և նրանք պատմում են դիւրի իրար կամ կեղծաւորներ՝ և կամ քչնակներ...»

(Շարունակելի)

